


<p>Կազմված է 22.08.2018թ. Բաղկացած է 21 էջից</p> <p>Erfasst am 22.08.2011 Bestehend aus 21 Seiten</p> <p>ՀԱՍՏՏՎԱԾ Է «ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ</p> <p>ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ</p> <p>GENEHMIGT LAUT DER ENTSCHEIDUNG VOM DER MITGLIEDERVERSAMMLUNG DES „DEUTSCHEN WIRTSCHAFTSVERBANDS“ NICHT-REGIERUNGSORGANISATION</p> <p>Տնօրեն՝ Դիթմար Կարլ Շթիլ/ Geschäftsführer: Dietmar Carl Stiel</p> <p> 22.08.2018</p>	<p>Տպագրված է ընդամենը 2 օրինակ ՕՐԻՆԱԿ 1</p> <p>ԳՐԱՆՑՎԱԾ Է</p> <p>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ</p> <p>«___» _____ 2019թ.</p> <p>Գրանցման համար</p> <p>_____</p> <p>Հարկ վճարողի հաշվառման համար</p> <p>_____</p>
---	---

<p>ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ «ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ</p>	<p>SATZUNG „DEUTSCHER WIRTSCHAFTSVERBAND“: NICHT-REGIERUNGSORGANISATION</p>
--	---

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	ALLGEMEINE BESTIMMUNGEN
<p>1. Անվանումը</p> <p>-Հայերեն լրիվ՝ «Գերմանական տնտեսական միավորում» հասարակական կազմակերպություն: -Հայերեն կրճատ՝ «ԳՏՄ» ՀԿ -Գերմաներեն լրիվ՝ “Deutscher Wirtschaftsverband“ Nicht-Regierungsorganisation -Գերմաներեն կրճատ՝ «DWV» NRO</p> <p>2. Կազմակերպության գտնվելու վայրը՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան 0019, Բաղրամյան պողոտա 18 2.</p>	<p>1. Name der Organisation</p> <p>-auf Armenisch vollständig: “Germanakan tntesakan miavorum“ hasarakakan kasmakerputiun - auf Armenisch abgekürzt: “GTM” HK - auf Deutsch vollständig: “Deutscher Wirtschaftsverband“ Nicht-Regierungsorganisation - auf Deutsch abgekürzt: „DWV“ NRO</p> <p>2. Sitz der Organisation Republik Armenien, Eriwan 0019, M. Baghramyan Ave. 18</p>
<p>3. Իրավական կարգավիճակը՝</p> <p>«Գերմանական տնտեսական միավորում» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն) առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների, իրավաբանական և ֆիզիկական անձանց հասարակական միավորումն է, որն ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ և որն իր գործունեությունը իրականացնում է ՀՀ օրենսդրության և սույն Կանոնադրության համաձայն: Կազմակերպությունը հիմնադրվել է «Գերմանական տնտեսական միավորում» իրավաբանական անձանց միության (գրանցման համար՝ 211.151.907452, գրանցված՝ 26.04.2016թ) ՀՀ օրենսդրության համաձայն վերակազմավորման արդյունքում և հանդիսանում է դրա իրավահաջորդը</p>	<p>3. Rechtlicher Status</p> <p>Die Nicht-Regierungsorganisation (ab sofort Organisation) ist eine zivilgesellschaftlicher Verband kommerzieller und nichtkommerzieller Vereinigungen, juristischer und natürlicher Personen, die entsprechend des Bürgerlichen Rechts der Republik Armenien und dieser Satzung tätig sind. Die Organisation wurde gemäß der Gesetzgebung der RA im Rahmen der Reorganisation des „Deutsche Wirtschaftsvereinigung“ juristischer Personen (Registrierungsnummer; 211.151.907452, registriert am 26.04.2016) gegründet und ist hiermit deren rechtlicher Nachfolger.</p>
<p>4. Ֆինանսական տարին</p> <p>Ֆինանսական տարին օրացույցային տարին է: պետական գրանցման տարին դա մեկ ոչ լրիվ ֆինանսական տարի է:</p>	<p>4. Geschäftsjahr</p> <p>Das Geschäftsjahr ist das Kalenderjahr. Das staatliche Registrierungsjahr ist ein unvollständiges</p>

<p>Առաջին ֆինանսական տարին սկսվում է պետական գրանցման օրից և ավարտվում է նույն օրացույցային տարվա դեկտեմբերի 31-ին:</p>	<p>Geschäftsjahr. Das erste Geschäftsjahr beginnt nach dem Tag der staatlichen Registrierung und endet am 31.12. des gleichen Kalenderjahres.</p>
<p>5. Կազմակերպության գործունեության առարկան և նպատակը Կազմակերպությունը ստեղծված է իր անդամների ձեռնարկատիրական գործունեությունը համակարգելու, նրանց ընդհանուր գույքային շահերը ներկայացնելու և պաշտպանելու նպատակով, ինչի համատեքստում նպատակադրված է.</p> <ul style="list-style-type: none"> - աջակցել հայ-գերմանական տնտեսական հարաբերություններին: - խորհրդատվությունների, վերապատրաստումների, - տեղեկատվության տրամադրման միջոցով աջակցել գերմանական և հայկական ընկերությունների մուտք գործելուն Գերմանիայի կամ Հայաստանի շուկա. - աջակցել շուկայական հնարավորությունների բացահայտմանը 	<p>5. Zweck und Aufgaben der Organisation Die Organisation hat das Ziel, die unternehmerischen Tätigkeiten ihrer Mitglieder zu fördern, deren gemeinsame Interessen zu vertreten und zu unterstützen, wobei die Vereinigung:</p> <ul style="list-style-type: none"> - die deutsch-armenischen Wirtschaftsbeziehungen fördert - den Markteintritt deutscher und armenischer Unternehmen in Armenien/Deutschland durch Beratung, Fortbildungen, Informationsvermittlung unterstützt - den Mitgliedern neue Marktchancen aufzeigt
<p>6. Նշված նպատակներին հասնելու համար Կազմակերպությունն՝</p> <p>Ա) աջակցություն է ցույց տալիս Գերմանական ընկերություններին Հայաստանի շուկա մուտք գործելու և շուկայական հնարավորությունների բացահայտման հարցում.</p> <p>Բ) օգնություն է ցուցաբերում Հայաստանի և Գերմանիայի տնտեսական ներկայացուցիչների միջև կապերի հաստատման հարցում.</p> <p>Գ) աջակցում է մասնագիտական կրթության և որակավորման բարձրացմանը, կազմակերպում է ցուցահանդեսներ և այլ միջոցառումներ նվիրված շրջակա միջավայրի</p>	<p>6. Zur Erreichung der genannten Zwecke obliegen der Organisation folgende Aufgaben:</p> <p>A. Unterstützung der deutschen Unternehmen beim Markteintritt in Armenien sowie das Aufzeigen von Marktchancen</p> <p>B. Kontaktherstellung zwischen armenischen und deutschen Wirtschaftvertretern</p> <p>C. Förderung der beruflichen Ausbildung und Weiterbildung in Armenien, des Messewesens sowie der Durchführung von weiteren Veranstaltungen in den Bereichen Umwelt,</p>

<p>պաշտպանության, SS ոլորտին, ինչպես նաև տուրիզմի, գինեգործության, միրգ-բանջարեղենի վերամշակման ոլորտներին:</p>	<p>Tourismus, IT, Technologie, Weinbau und Frucht- und Gemüseverarbeitung</p>
<p>Դ) տեղեկությունների և խորհուրդների տրամադրում, նաև եզրակացությունների, շուկայական հետազոտությունների և հաշվետվությունների պատրաստում,</p>	<p>D. Erteilung von Auskünften und Beratungen sowie die Erstellung von Marktstudien und Berichten</p>
<p>Ե) գերմանական և հայկական ընկերությունների միջև տնտեսական հարաբերությունների ամրապնդում, կառավարում և զարգացում,</p>	<p>E. Vermittlung, Pflege und Weiterentwicklung von Wirtschaftsbeziehungen zwischen Unternehmen aus Deutschland und Armenien</p>
<p>Զ) վերը նշվածերկրների հետաքրքրված Տնտեսական շրջանակների միջև կապի հաստատում և զարգացում,</p>	<p>F. Kontaktabnahrung und Kontaktpflege zwischen interessierten Wirtschaftskreisen der obengenannten Länder</p>
<p>Է) անդամների տնտեսական շահերի ներկայացուցչություն գերմանական և հայկական վարչական կառույցներում և այլ հաստատություններում,</p>	<p>G. Interessenvertretung deutscher und armenischer Unternehmer und Mitglieder bei Regierungsstellen und anderen Institutionen</p>
<p>Ը) Հայաստանի տնտեսական վիճակի վերաբերյալ տեղեկությունների հավաքում և տարածում, հրապարակումների թողարկում տնտեսական և առևտրային քաղաքական իրավիճակի զարգացման վերաբերյալ (տարեկան հաշվետվություններ և այլ հրատարակություններ), այս հարցի վերաբերյալ ՀՀ Գերմանիայի դեսպանության տնտեսական բաժնի և Գերմանիայի ՀՀ դեսպանության տնտեսական բաժինների հետ սերտ համագործակցություն,</p>	<p>H. Sammlung und Weitergabe von Informationen über die Wirtschaftslage in Armenien, über Stand und Entwicklung von wirtschafts- und handelspolitischen Fragendurch Publikationen (z.B. Rundschreiben, Jahresberichte, Merkblätter sowie sonstige Veröffentlichungen). Hierfür wird eine enge Zusammenarbeit mit der Wirtschaftsabteilung der deutschen Botschaft in Eriwan und der Armenischen Botschaft in Berlin gepflegt.</p>
<p>Թ) միջոցառումների կազմակերպում, ինչպիսիք են, ի թիվս այլոց՝ մամլո ասուլիսներ, տեղեկատվական սեմինարներ, գիտաժողովներ և բանավեճեր, նաև մասնակցություն այնպիսի միջոցառումներին, որոնք չեն հակասում Կանոնադրությամբ նախատեսված նպատակներին:</p>	<p>I. Durchführung von Veranstaltungen wie z.B. Pressekonferenzen, Informationsseminaren, Symposien und Diskussionen, sowie Teilnahme an derartigen Veranstaltungen, soweit sie mit dem Satzungszweck vereinbar sind.</p>
<p>Կազմակերպությունը պետք է գերծ մնա այնպիսի միջոցառումների իրականացումից, որոնք հատուկ իրավական դրույթներով</p>	<p>Die Organisation enthält sich jeder Tätigkeit, die laut besonderen Rechtsvorschriften den</p>

<p>սահմանված են քաղաքական կուսակցությունների և շարժումների համար, ինչպես նաև այլ գաղափարախոսական գործողություններից:</p>	<p>politischen Parteien und Bewegungen vorbehalten ist, sowie jeder weltanschaulichen Betätigung.</p>
<p>Կազմակերպությունը գործում է տարեկան բյուջեին համապատասխան:</p>	<p>Die Organisation wirtschaftet nach einem Jahresbudget.</p>
<p>Կազմակերպությունը պարտավոր է ընդհանուր գործող կարգի համաձայն վարել հաշվապահական գրքեր և կազմել հաշվետվական փաստաթղթեր:</p>	<p>Die Organisation ist verpflichtet im Sinne der allgemeingültigen Vorschriften Bücher zu führen und Buchungsnachweise aufzustellen.</p>
<p>Կազմակերպությունը կարող է կանոնադրության նպատակները իրականացնելու նպատակով իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն ինչպես ինքնուրույն, այնպես էլ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար ստեղծել տնտեսական ընկերություն կամ լինել նման ընկերության մասնակից:</p>	<p>Die Organisation darf für das Erreichen der Satzungsziele sowohl eigenständig kommerzielle Tätigkeit ausüben, als auch eine kommerzielle Gesellschaft gründen oder Anteilseigner einer kommerziellen Gesellschaft werden.</p>
<p>ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐՆ ՈՒ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՂ ԿՈՂՄԵՐԸ</p>	<p>VERBANDSMITGLIEDER UND KOOPERATIONSPARTNER</p>
<p>7. Կազմակերպության անդամները</p>	<p>7. Mitgliedschaft der Organisation</p>
<p>Կազմակերպության անդամ կարող է լինել իրավաբանական անձինք, որոնց գտնվելու վայրն է Գերմանիան, Հայաստանը, հատուկ դեպքերում նաև այլ երկիրը, ինչպես նաև տասնութ տարին լրացած ֆիզիկական անձինք, ովքեր հանդիսանում են Գերմանիայի, Հայաստանի, հատուկ դեպքերում նաև այլ երկրի քաղաքացիներ, որոնք (ովքեր) հետաքրքրություն ունեն հայ -գերմանական տնտեսական հարաբերություններում: Կազմակերպության աշխատակիցներն իրավունք չունեն Կազմակերպության անդամ լինելու:</p>	<p>Mitglieder der Organisation können juristische Personen sein, die ihren Standort in Armenien oder Deutschland oder in besonderen Fällen auch in anderen Ländern haben, sowie natürliche Person über achtzehn Jahre alt mit deutscher, armenischer und in besonderen Fällen auch anderen Staatsangehörigkeiten, die Interesse an den deutsch-armenischen Wirtschaftsbeziehungen haben. Mitarbeiter des Verbandes dürfen keine Mitglieder der Organisation sein.</p>

<p>8. Պատվավոր անդամի կոչումը</p> <p>Այն անդամներին, որոնք առավել արժեքավոր աջակցություն են ցուցաբերում գերմանա-հայկական տնտեսական հարաբերություններին, անդամների Շնդհանուր ժողովի առաջարկությամբ և ներկա անդամների երկու երրորդի համաձայնությամբ կարող է շնորհվել պատվավոր մասնակցի կոչում: Պատվավոր անդամները անդամավճար չեն վճարում և չունեն քվեարկելու իրավունք:</p>	<p>8. Ehrenmitglieder</p> <p>Persönlichkeiten, die sich um die Förderung der deutsch-armenischen Wirtschaftsbeziehungen besonders verdient gemacht haben, kann auf Vorschlag des Vorstandes bei der Mitgliederversammlung mit Zweidrittelmehrheit der anwesenden Mitglieder die Ehrenmitgliedschaft verliehen werden. Ehrenmitglieder bezahlen keinen Mitgliedsbeitrag und sind nicht stimmberechtigt.</p>
<p>9. Կազմակերպության համագործակցությունն այլ կազմակերպությունների հետ</p> <p>Կազմակերպությունն իր գործունեությունը հրականացնում է ՀՀ Գերմանիայի դեսպանության, Գերմանիայում ՀՀ դեսպանության, GIZ-ի (Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն), KfW-ի (Զարգացման բանկ), DIHK-ի (Գերմանիայի առևտրային և արտադրական պալատներ) և GTAI-ի (Germany Trade and Invest) հետ վստահ համագործակցությամբ:</p> <p>ԳՏՄ-ն նաև առաջնորդվում է արտասահմանում գերմանական առևտրի պալատների սկզբունքներով, այնքանով որքանով այն չի հակասում ՀՀ օրենսդրությանը:</p>	<p>9. Kooperationspartner der Organisation</p> <p>Die Organisation übt ihre Tätigkeit in enger und vertrauensvoller Zusammenarbeit mit der Deutschen Botschaft in Eriwan, der Armenischen Botschaft in Berlin, der GIZ (Gesellschaft für internationale Zusammenarbeit), der KfW (Kreditanstalt für Wiederaufbau), mit dem DIHK (Deutscher Industrie- und Handelskammertag) und GTAI (Germany Trade and Invest) aus.</p> <p>Der DWV orientiert sich an den Prinzipien, Dienstleistungen und Aktivitäten deutscher Auslandshandelskammern, soweit es der Gesetzgebung der Republik Armenien nicht widerspricht.</p>
<p>11. Անդամավճարներ</p> <p>Տարեկան անդամավճարի չափը կազմում է նվազագույնը 60.000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ: Անդամավճարի չափը և գանձման կարգը սահմանվում է է վարչական խորհրդի կողմից, վերջինիս կողմից հաստատված անդամակցության հարցաթերթիկի հիման վրա:</p>	<p>11. Mitgliedsbeiträge</p> <p>Der Mindestbeitrag beträgt 60.000 (sechzig Tausend) AMD. Die Zahlungsweise des Mitgliedschaftsbeitrags wird vom Vorstand des Verbands aufgrund des vom Vorstand bestätigten Mitgliedschaftsformulars festgelegt. Die Mitgliedsbeiträge werden sind 30 (dreißig)Tage nach Beitritt per Banküberweisung auf das</p>

Անդամավճարը պետք է կատարվի անդամ դառնալու պահից 30 (երեսուն) օրվա ընթացքում Կազմակերպության բանկային հաշվին գումարի փոխանցման միջոցով: Որպես կանոն տարեկան անդամավճարները պետք է վճարվեն մինչև սույն տարվա առաջին եռամսյակի ավարտը: Անդամավճարները պետք է օգտագործվեն Կազմակերպության նպատակների և գործունեության առարկայի ֆինանսավորման համար:

Organisationsbankkonto zu zahlen. Generell sind die Mitgliedsbeiträge jeweils für ein Kalenderjahr bis zum Ende des ersten Quartals zu entrichten. Die Mitgliedsbeiträge dürfen nur für die Finanzierung der Verbandszwecke und Aufgaben verwendet werden.

12. Կազմակերպության անդամակցությունը

12. Mitgliedschaft bei der Organisation

Կազմակերպության անդամ դառնալու վերաբարյալ գրավոր դիմումները, ինչպես նաև իրավաբանական անձանց դեպքում վերջինիս իրավասու մարմնի որոշումը ներկայացվում է Կազմակերպության տնօրենին, այնուհետև տնօրենի կողմից ներկայացվում են Կազմակերպության վարչական խորհրդին: Եթե անդամի թեկնածուն համաձայն է կազմակերպության կանոնադրության հետ և համապատասխանում է կազմակերպության կանոնադրությամբ անդամներին ներկայացվող պահանջներին, իսկ ներկայացված դիմումը՝ վարչական խորհրդի սահմանած դիմումին ներկայացվող չափանիշներին (եթե այդպիսիք սահմանվել են), ապա վարչական խորհուրդը հանձնարարում է Կազմակերպության տնօրենին անդամի թեկնածուի դիմումի վերաբերյալ հարցում իրականացնել կազմակերպության անդամներին կամ Կազմակերպության ժողովին Կազմակերպության տնօրենը նոր անդամի ընդունման վերաբերյալ հարցումը փակցնում է կազմակերպության կայք էջում, կամ անձամբ կամ որևէ հեռահաղորդակցման միջոցով հարցում է կատարում կազմակերպության անդամներին՝ նոր անդամ ներգրավելու հարցի կապակցությամբ՝ հարցնելով, թե արդյոք նրանք առարկում են տվյալ սուբյեկտի անդամակցության դեմ Հարցումը ստանալուց հետո մեկ շաբաթվա ընթացքում

Schriftliche Mitgliedschaftsanträge, sowie die Beschlüsse des zuständigen Organs bezüglich juristischer Personen werden dem Geschäftsführer der Organisation vorgelegt, der seinerseits diese dem Vorstand der Organisation vorstellt. Falls der Antragsteller die Verbandssatzung anerkennt und die Mitgliedschaftsvoraussetzungen erfüllt, befragt die Geschäftsstelle die Mitglieder oder die Mitgliederversammlung.

Die Befragung über die Aufnahme eines neuen Mitglieds wird vom Geschäftsführer entweder auf der Webseite veröffentlicht, persönlich oder via Telekommunikationsmittel durchgeführt. Dabei wird erfragt, ob die Mitglieder die Aufnahme des neuen Mitglieds ablehnen.

Die Mitglieder der Organisation delegieren diese Entscheidungsbefugnis jedoch dauerhaft an den Vorstand der Organisation, der innerhalb von sieben Kalendertagen über die Aufnahme des neuen Mitglieds beschliesst. Ein Recht auf Aufnahme besteht nicht. Beim Einverständnis ist das Ergebnis dem Antragsteller vom Geschäftsführer der Organisation schriftlich oder per E-Mail oder durch eine Veröffentlichung auf der Verbandsw Webseite innerhalb von zwei Wochen mitzuteilen. Die Mitgliedschaft beginnt gleich ab der Benachrichtigung über den Aufnahmebeschluss.

առարկությունը չներկայացվելը համարվում է հարցումը ստացած Կազմակերպության անդամի նոր անդամ ներգրավելու վերաբերյալ համաձայնությունը ստացված: Նոր անդամի ընդունման որոշում հրականացնելը անդամները, սակայն, երկարաժամկետ հանձնարարում են Խորհրդին, որը յոթ օրացուցային օրվա ընթացքում նոր անդամի ընդունման մասին որոշում է կայացնում: Դիմում ներկայացնողը իրավունք չունի այն հաստատելու պահանջ ներկայացնել: Անդամների համաձայնության պարագայում Կազմակերպության տնօրենը գրավոր կամ էլեկտրոնային եղանակով, կամ Կազմակերպության կայք էջում հրապարակում իրականացնելու միջոցով անդամի թեկնածուին իրազեկում է նրա՝ Կազմակերպության անդամ դառնալու վերաբերյալ անդամների համաձայնությունը ստանալու պահից ոչ ուշ քան երկու շաբաթվա ընթացքում Կազմակերպության անդամի թեկնածուն իրազեկման պահից համարվում է Կազմակերպության անդամ Անհատական անդամակցությունը մեկ այլ անձի փոխանցելը կամ կտակելը չի թույլատրվում: Վարչական խորհուրդը հաստատում է Կազմակերպության անդամ դառնալու դիմումի ձևի, նրա հետ ներկայացվող անհրաժեշտ տեղեկությունների ցանկի և այլ պայմանների վերաբերյալ չափանիշները: Տնօրենը վարում է Կազմակերպության անդամների գրանցամատյանը, որը պետք է պարունակի տեղեկություններ Կազմակերպության անդամների անվանումների, անդամ դառնալու և անդամությունից դուրս գալու ամսաթվերի մասին:

13. Կազմակերպությունից դուրս գալը կամ հեռացվելը

Կազմակերպությունից դուրս գալու վերաբերյալ անդամը օրացուցային տարվա ավարտից

Die Übertragung oder Vererbung der Einzelmitgliedschaft an eine andere Person ist nicht gestattet.

Der Vorstand der Organisation genehmigt die Formalien der Antragstellung (die Form des Antrags auf Mitgliedschaft, die Liste der vorzulegenden Angaben und andere Kriterien). Der Geschäftsführer der Organisation führt ein Mitgliederverzeichnis, das Angaben über die Namen, Beitritts- und Austrittsdaten der Mitglieder enthalten soll.

13. Austritt oder Ausschluss aus der Organisation

Das Mitglied hat den Geschäftsführer der Organisation über die Beendigung der

ամենաուշը մեկ ամիս առաջ գրավոր դիմում պետք է ներկայացնի Գործադիր տնօրենին: Անդամի՝ կազմակերպությունից դուրս գալու վերաբերյալ որոշումը կայացնում է Վարչական Խորհուրդը: Կազմակերպությունից դուրս եկած անդամն իրավունք չունի կատարված անդամավճարների վերադարձի կամ փոխհատուցման համար Կազմակերպությունից գույք պահանջելու: Կազմակերպությունից դուրս եկած անդամը պահպանում է տվյալ ֆինանսական տարվա համար անդամավճարի վճարման պարտականությունը, ինչպես նաև Կազմակերպությունից դուրս եկած անդամը պարտավոր է կատարել օրենքով ստանձնած պարտավորությունները, մասնավորապես, վճարել իր դուրս գալու դրությամբ անդամավճարների պարտքն ամբողջ ծավալով:

Անդամը Կազմակերպությունից կարող է հեռացվել, եթե առկա է դրա համար հիմնավոր պատճառ:
Հիմնավոր պատճառ են համարվում Կազմակերպության շահերի ու նպատակների խախտումը, Կանոնադրության դրույթների խախտումը, նաև Կազմակերպությունը արատավորող և այն հեղինակազրկող գործողությունը: Կազմակերպության անդամի հեռացումը կատարվում է Կազմակերպության առնվազն երկու երրորդ անդամների համաձայնությամբ՝ հարցման միջոցով կամ Շնդհանուր ժողովում ձայնի իրավունք ունեցող ներկա անդամների երկու երրորդի համաձայնությամբ:

Տվյալ ֆինանսական տարվա ավարտին Անդամավճարը չվճարելու պարագայում անդամավճար պարտականությունը չկատարած անդամը համարվում է հեռացված:

14. Անդամների իրավունքները և պարտավորությունները:

Mitgliedschaft schriftlich einen Monat vor dem Kalenderjahresende zu benachrichtigen. Der Beschluß über den Austritt aus der Mitgliedschaft wird vom Vorstand der Organisation gefasst.

Das ausgetretene Mitglied hat kein Recht auf die Rückgabe oder Kompensation der geleisteten Beiträge aus dem Vermögen des „Deutschen Wirtschaftsverbands“. Nach dem Austritt aus der Mitgliedschaft hält das ausgetretene Mitglied die Verpflichtung ein, den Mitgliedsbeitrag des laufenden Geschäftsjahres zu zahlen

Das ausgetretene Mitglied ist verpflichtet die rechtlichen Forderungen zu erfüllen, insbesondere die zu zahlenden Jahresbeiträge im vollen Umfang zu leisten.

Das Mitglied kann aus der Organisation ausgeschlossen werden, wenn ein wichtiger Grund vorliegt. Als wichtige Gründe sind insbesondere ein schwerwiegender Verstoss gegen die Interessen und den Zweck der Organisation, die schuldhafte Verletzung der Satzungsbestimmungen sowie ein unehrenhaftes Verhalten anzusehen.

Der Ausschluss eines Mitglieds erfolgt durch Zweidrittelzustimmung durch die Mitgliederbefragung oder durch Zweidrittelzustimmung der gültigen Stimmen bei der Mitgliederversammlung.

Das Mitglied, das bis zum Jahresende den laufenden Mitgliedsbeitrag nicht gezahlt hat, wird von der Organisation ausgeschlossen.

14. Die Rechte und Verpflichtungen der Mitglieder

<p>1. Կազմակերպության անդամն իրավունք ունի՝</p> <p>1) Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով ընտրելու և ընտրվելու Կազմակերպության կառավարման կամ վերահսկողություն իրականացնող մարմիններում.</p> <p>2) ներկա լինելու ժողովին անձամբ, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ նաև լիազորված անձի միջոցով կամ Կազմակերպության կոլեգիալ կառավարման այլ մարմինների նիստերին.</p> <p>3) Օգտվելու Կազմակերպության ծառայություններից անվճար և վճարովի հիմունքներով.</p> <p>4) ծանոթանալու Կազմակերպության մարմինների արձանագրություններին, ստանալ նրանց ընդունած որոշումների պատճենները.</p> <p>5) Բողոքարկելու Կազմակերպության մարմինների որոշումները վերադասության և դատական կարգով.</p> <p>6) Կազմակերպությունից պահանջելու տեղեկություններ, ստանալու փաստաթղթերի պատճեններ՝ Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, մարմինների արձանագրությունների, որոշումների, գույքի կառավարումից ստացված դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալու նրա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացության պատճենը, որոնք վերաբերում են վերջին երեք տարիներին.</p> <p>7) իրականացնելու օրենքով կամ Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներ:</p> <p>2. Կազմակերպության անդամը պարտավոր է՝</p> <p>1) կատարել Կազմակերպության կանոնադրական պահանջները և կառավարման մարմինների որոշումները.</p> <p>2) բարեխղճորեն կատարել կառավարման մարմինների որոշմամբ իր վրա դրված պարտականությունները.</p> <p>3) վճարել անդամավճար:</p>	<p>1. Das Mitglied der Organisation hat das Recht</p> <p>1) Laut der in der Satzung der Organisation festgelegten Regelungen und Fällen als Mitglied der Verwaltungsorgane der Organisation gewählt zu werden.</p> <p>2) Persönlich und bei juristischer Person durch eine bevollmächtigte Person an der Versammlung oder an anderen Sitzungen der kollegialien Organe der Organisation anwesend zu sein</p> <p>3) Die Dienstleistungen der Organisation zu kostenpflichtig sowie kostenlos zu nutzen</p> <p>4) Sich mit den Protokollen der Organe der Organisation bekannt zu machen, die Kopien der von den Organen der Organisation gefassten Beschlüsse zu bekommen.</p> <p>5) Sich über die Beschlüsse der Organe der Organisation beim Vorgesetzten und beim Gericht zu beklagen</p> <p>6) Von der Organisation Informationen zu verlangen, Dokumentenkopien über die Änderungen der Satzung der Organisation, über die Protokolle der Organe, Beschlüsse, sowie das Finanzmittel der Organisation, sowie die Kopie der Berichte der unbefangenen Kassenprüfung für die letzten drei Jahre zu bekommen.</p> <p>7) Weitere gesetzliche sowie in der Satzung der Organisation festgelegte Rechte auszuüben</p> <p>2. Das Mitglied der Organisation ist verpflichtet,</p> <p>1) Die gesetzlichen Anforderungen der Organisation sowie die Entscheidungen der Verwaltungsorgane der Organisation zu erfüllen</p> <p>2) Seine von den Verwaltungsorganen bestimmten Aufgaben gewissenhaft zu erfüllen,</p> <p>3) Den Mitgliedsbeitrag zu zahlen</p>
--	---

<p>15. Անդամների հարցումների իրականացման կարգը</p>	<p>15. Verfahren der Mitgliederbefragungen</p>
<p>Սույն կանոնադրությամբ սահմանված հարցումները կատարվում են հետևյալ կարգով. Կազմակերպության Վարչական խորհրդի հանձնարարությամբ Կազմակերպության տնօրենը հարցումը փակցնում է կազմակերպության կայք էջում, կամ անձամբ կամ որևէ հեռահաղորդակցման միջոցով հարցում է կատարում կազմակերպության անդամներին: Հարցումը ստանալու օրվան հաջորդող յոթ օրացուցային օրվա ընթացքում առարկությունը չներկայացվելը համարվում է հարցումը ստացած կազմակերպության անդամի համաձայնությունը ստացված, ինչի կապակցությամբ Տնօրենն իրազեկում է Վարչական խորհրդին: Հարցումը իրականացվում է որոշակի հարցերի շուրջ անդամների կարծիքը ստանալու համար և չպետք է կրի մշտական բնույթ ու փոխարինի ստորև նշված Ընդհանուր ժողովի նիստերը:</p>	<p>Gemäß der vorliegenden Satzung werden die Mitgliederbefragungen wie folgt durchgeführt. Im Auftrag vom Vorstand bringt der Geschäftsführer eine Befragung entweder auf der Webseite der Organisation an oder führt diese persönlich oder via Telekommunikationsmittel durch. Wird nach dem Eingang der Information über die Befragung innerhalb von nachfolgenden sieben Kalendertagen kein Einspruch eingelegt, so gilt die Zustimmung des Mitglieds als erteilt. Die Ergebnisse der Befragung sind dem Vorstand vom Geschäftsführer mitzuteilen. Der Charakter einer Befragung ist die Einholung einer Mitgliedermeinung zu einem konkreten Sachverhalt, sie ersetzt jedoch in keinsten Weise eine Mitgliederversammlung wie in Punkt 16 beschrieben.</p>
<p>ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ</p>	<p>DIE VERWALTUNGSORGANE DER ORGANISATION</p>
<p>Կազմակերպության կառավարման մարմիններն են Կազմակերպության ընդհանուր ժողովը, Վարչական Խորհուրդը և Տնօրենը:</p>	<p>Die Verwaltungsorgane der Organisation sind die Mitgliederversammlung, der Vorstand und die Geschäftsführung der Organisation.</p>
<p>16. Կազմակերպության ընդհանուր ժողովը և նրա իրավասությունները</p>	<p>16. Mitgliederversammlung der Organisation und deren Zuständigkeiten</p>
<p>Ընդհանուր ժողովը հանդիսանում է Կազմակերպության կառավարման բարձրագույն մարմինը: Ընդհանուր ժողովի նիստը անցկացնում է տարին մեկ անգամ, ֆինանսական տարվա ավարտից ոչ ուշ, քան երկրորդ եռամսյակում: Նիստը կարող է անցակացվել նաև հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ: Վերիջինիս կարող է</p>	<p>Die Mitgliederversammlung ist das oberste Verwaltungsorgan der Organisation. Die ordentliche Mitgliederversammlung findet einmal jährlich statt, spätestens im zweiten Quartal nach dem Ende des Geschäftsjahres. Es kann auch eine Fernsitzung mittels Telekommunikationsmittel gehalten werden. Mitglieder haben das Recht, sich durch eine bevollmächtigte Person vertreten zu</p>

<p>ներկայանալ համապատասխան անդամի կողմից լիազորված անձը: Ընդհանուր ժողովի լիազորություններն են, մասնավորապես՝</p>	<p>lassen. ordentlichen Mitgliederversammlung obliegen insbesondere folgende Aufgaben:</p>
<p>Ա) կատարելու Կազմակերպության կանոնադրությունում փոփոխություններ կամ լրացումներ կամ նոր խմբագրությամբ հաստատելու կանոնադրությունը.</p>	<p>A. Änderungen oder Erweiterungen in der Satzung der Organisation oder Genehmigung der neu überarbeiteten Satzung</p>
<p>Բ) ստեղծելու այլ իրավաբանական անձ, որոշումներ ընդունելու այլ կազմակերպությունում Կազմակերպության մասնակցության մասին.</p>	<p>B. Gründung anderer juristischer Person, Entscheidung über die Beteiligung der Organisation an anderen Organisationen,</p>
<p>Գ) որոշումներ ընդունելու Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումների կամ հիմնարկների ստեղծելու և դրանց կանոնադրությունները հաստատելու մասին.</p>	<p>C. Entscheidung über die Gründung von getrennten Abteilungen oder Institutionen und deren Satzungs genehmigung</p>
<p>Դ) հաստատելու Կազմակերպության կառուցվածքը.</p>	<p>D. Bestätigung der Organisationsstruktur</p>
<p>Ե) որոշումներ ընդունելու Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված մարմինների կազմավորման, ընտրության (նշանակման) կամ նրանց լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու (զբաղեցրած պաշտոնից ազատելու) մասին</p>	<p>E. Entscheidung über die Gründung, Bestellung (Ernennung) oder Auflösung (Entlassung) der gemäß der Satzung der Organisation vorgesehenen Organe</p>
<p>Զ) տարեկան մեկ անգամ հաստատելու գործադիր մարմնի կողմից ժողովի գումարմանը նախորդող տարիների ընթացքում հաստատված Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները.</p>	<p>F. Genehmigung der vor der Mitgliederversammlung in vorangegangenen Jahren vorgelegten jährlichen Berichte über die Aktivitäten und das Inventar der Organisation</p>
<p>Է) դադարեցնելու Կազմակերպության մարմինների իրավական ակտերի պահանջներին և կանոնադրությանը հակասող որոշումների գործողությունը.</p>	<p>G. Einstellung der Aktivitäten, die den Anforderungen und der Satzung der Rechtsakte der Organisation widersprechen,</p>
<p>Ը) ընդունելու որոշում Կազմակերպության վերակազմակերպման մասին.</p>	<p>H. Entscheidung über die Reorganisation der Organisation,</p>

<p>Թ) Կազմակերպության խորհրդի կողմից Կարչական պատրաստված հաշվետվությունների լուծում (այդ թվում նաև բյուջեի վերաբերյալ),</p>	<p>I. Entgegennahme der vom Vorstand der Organisation vorbereiteten Berichte (einschließlich Haushaltsplan),</p>
<p>Ժ) Կարչական խորհրդի անդամների ընտրություն երկու տարի ժամկետով, հեռացում և ազատում, խորհրդի կողմից կատարած գործունեության գնահատում,</p>	<p>J. Wahl der Vorstandsmitglieder für zwei Jahre, Beurteilung der vom Vorstand geleisteten Tätigkeit.</p>
<p>Ի) Տարեկան մեկ անգամ վերստուգիչի ընտրություն կազմակերպության անդամներից և անհրաժեշտության դեպքում արտաքին աուդիտորի ընտրություն,</p>	<p>K. jährliche Wahl eines / einer Kassenprüfers/In aus der Mitte der Mitglieder der Organisation und bei Bedarf eines / einer externen Rechnungsprüfers/In</p>
<p>Լ) Կազմակերպության մասնակցի կազմակերպությունից հեռացվելու մասին որոշման կայացում,</p>	<p>L. Entscheidung über den Ausschluss eines Mitgliedes der Organisation</p>
<p>Խ) Կանոնադրությունում փոփոխությունների Կատարում և դրանց հաստատում: Կանոնադրության փոփոխության մասին որոշմանը պետք է կողմնակից լինի ներկաների կամ ձայնի իրավունք ունեցող անդամների ներկայացուցիչների երկու երրորդը:</p>	<p>M. Beschlussfassung von Satzungsänderungen oder Genehmigung der geänderten Satzung. Um die Entscheidung über die Satzungsänderung zu genehmigen, wird die Stimme von zwei drittel der Anwesenden oder stimmberechtigten Mitgliedsvertretern benötigt.</p>
<p>Ճ) Կազմակերպության վերակազմակերպման կամ լուծարման մասին որոշման կայացում:</p>	<p>N. Beschlussfassung über die Reorganisation oder Auflösung der Organisation.</p>
<p>17. Կազմակերպության խորհրդի օրակարգը</p>	<p>17. Die Tagesordnung der ordentlichen Mitgliederversammlung der Organisation</p>
<p>Տարեկան ընդհանուր ժողովի օրակարգը պետք է պարունակի հետևյալ կետերը՝</p>	<p>Die Tagesordnung der jährlichen Mitgliederversammlung hat insbesondere folgende Punkte zu umfassen:</p>
<p>Ա) Կարչական խորհրդի զեկուցում (կցելով բյուջեն),</p>	<p>A. Bericht des Vorstandes (einschließlich Haushaltsplan)</p>
<p>Բ) «Կազմակերպության վերստուգիչի և/կամ արտաքին զեկուցում նախորդ տարվա բյուջեի վերաբերյալ,</p>	<p>B. Entgegennahme von Finanzberichten von Prüfern über die Rechnungslegung der Organisation im vorangegangenen Haushaltsjahr</p>
<p>Գ) Կարչական խորհրդի և Տնօրենի կողմից կատարած գործունեության գնահատում,</p>	<p>C. Beurteilung der vom Vorstand und Geschäftsführer geleisteten Arbeiten</p>
<p>Դ) ընտրություններ՝ կանոնադրությամբ սահմանված անհրաժեշտության դեպքում:</p>	<p>D. Wahlen, sofern es satzungsgemäß erforderlich ist</p>

<p>Ե) համաձայնություն Վարչական խորհրդի կողմից տրված ֆինանսական տարվա բյուջեին,</p> <p>Զ) ընթացիկ տարվա համար Կազմակերպության ֆինանսահաշվապահական հաշվառման վերստուգիչ և/կամ արտաքին աուդիտորի ընտրություն,</p> <p>Է) տրված հայտերի վերանայում,</p> <p>Ը) Վարչական խորհրդի ընտրություն՝ երկու տարի ժամկետով, նրա անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցում խորհրդի անդամներն ընտրվում են անդամների Ընդհանուր ժողովի կողմից ձայների պարզ մեծամասնությամբ: Թեկնածուների հավասար ձայներ ստանալու պարագայում կրկին անցկացվում է ընտրություն:</p>	<p>E. Genehmigung des vom Vorstand vorzulegenden Haushaltsvorschlags für das laufende Geschäftsjahr</p> <p>F. Ernennung eines Kassen- ggf. Rechnungsprüfers der Organisation für das laufende Haushaltsjahr</p> <p>G. Beschlussfassung über die vorliegenden Anträge</p> <p>H. Wahlen der Vorstandsmitglieder für eine Amtszeit von zwei Jahren und deren frühzeitige Abwahl. Die Vorstandsmitglieder werden von der Mitgliederversammlung mit einfacher Mehrheit gewählt. Erhalten Kandidaten die gleiche Stimmzahl muss ein weiterer Wahlgang einberufen werden.</p>
<p>18. Արտահերթ Ընդհանուր ժողովը</p> <p>Տարեկան ժողովից բացի գումարվող ժողովները համարվում են արտահերթ: Ցանկացած հարցով կարող է հրավիրվել արտահերթ ընդհանուր ժողով Արտահերթ ընդհանուր ժողովը հրավիրվում է Վարչական խորհրդի որոշմամբ կամ կազմակերպության անդամների մեկ հինգերորդի գրավոր պահանջով</p>	<p>18. Außerordentliche Mitgliederversammlung</p> <p>Neben der jährlichen Mitgliederversammlung können weitere, nämlich außerordentliche Mitgliederversammlungen zur Behandlung etwaiger Anliegen einberufen werden. Die außerordentliche Mitgliederversammlung wird vom Vorstand oder auf schriftliche Aufforderung von mindestens ein Fünftel der ordentlichen Mitglieder der Organisation einberufen.</p>
<p>19. Ժողովների գումարման կարգը</p> <p>Ընդհանուր ժողովների գումարման մասին որոշումը կայացնում է Վարչական խորհուրդը, որը Կազմակերպության անդամներին այդ մասին տեղեկացնում է երկու շաբաթ առաջ՝ ուղարկելով ժողովի օրակարգը և հայտնելով ժողովի անցկացման վայրի և ժամանակի մասին: Ժողովի գումարման մասին ծանուցումն իրականացվում է գրավոր կամ էլեկտրոնային</p>	<p>19. Einberufung und Verlauf der Mitgliederversammlungen</p> <p>Die Entscheidung über Einberufung der Mitgliederversammlung wird vom Vorstand getroffen, der die Mitglieder der Organisation darüber zwei Wochen vor dem Sitzungstermin benachrichtigt. Die Einladung erfolgt durch Brief, E-Mail oder Ankündigung auf der Webseite der Vereinigung und muss die Tagesordnung und</p>

<p>իրագրված, ինչպես նաև կազմակերպության կայք էջում դրա մասին հրապարակում կատարելու միջոցով:</p> <p>Արտահերթ ընդհանուր ժողովը գումարվում է Կազմակերպության անդամների մեկ երրորդի նախաձեռնությամբ, ինչպես նաև Ընդհանուր ժողովի նախաձեռնությամբ: Արտահերթ ընդհանուր ժողովը գումարվում է նախաձեռնություն հայտնելուց հետո 30 օրվա ընթացքում:</p> <p>Ժողովի անցկացման տարին, ամիսը, ամսաթիվն ու կարգը, ինչպես նաև կազմակերպության անդամներին ժողովի անցկացման մասին ծանուցման կարգը, նրանց տրամադրվող նյութերի ցանկը սահմանում է խորհուրդը՝ սույն կանոնադրության պահանջներին համապատասխան:</p> <p>Կազմակերպության անդամները կարող են օրակարգում լրացուցիչ հարցեր ներգրավելու վերաբերյալ առաջարկություններ անել՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Վարչական խորհրդին ժողովի օրվան նախորդող առաջարկություններ անել՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Վարչական խորհրդին ժողովի օրվան նախորդող հինգ աշխատանքային օր առաջ: Տնօրենը նշված հարցերի վերաբերյալ կազմում է լրացուցիչ օրակարգ և դրա մասին ծանուցում Կազմակերպության անդամներին ժողովին նախորդող հինգ օրացույցային օր առաջ:</p> <p>Ժողովը նախագահում է Վարչական խորհրդի նախագահը, կամ նրա հանձնարարությամբ այլ անդամի ներկայացուցիչ:</p> <p>20. Ժողովի որոշումների կայացման կարգը</p> <p>Ժողովի որոշումները կայացվում են ժողովին մասնակցող անդամների ձայների պարզ</p>	<p>Informationen über Sitzungsort und -zeit enthalten.</p> <p>Die Außerordentliche Mitgliederversammlung ist von einem Drittel der Mitglieder der Organisation, sowie von der Jahresmitgliederversammlung einzuberufen. Die außerordentliche Mitgliederversammlung ist innerhalb von 30 Tagen nach deren Bekanntmachung zu durchzuführen. Sitzungsdatum und -ordnung sowie das Mitteilungsverfahren über die Sitzungseinberufung und das Verzeichnis der den Mitgliedern der Organisation vorzulegenden Materialien wird vom Vorstand in Übereinstimmung mit den Satzungsanforderungen bestimmt.</p> <p>Die Mitglieder der Organisation können Vorschläge zur Tagesordnung abgeben. Die Vorschläge müssen dem Vorstand fünf Werktage vor dem Sitzungstermin schriftlich zugestellt werden. Der Geschäftsführer erstellt eine neue Tagesordnung und teilt diese den Vereinigungsmitgliedern der Organisation spätestens drei Werktage vor dem Sitzungstermin mit.</p> <p>Die Sitzung der Mitgliederversammlung wird vom Vorstandsvorsitzenden oder von ihm beauftragten Vertreter (Mitglied) geleitet.</p> <p>20. Entscheidungsverfahren in der Mitgliederversammlung</p> <p>Beschlüsse der Mitgliederversammlung werden mit einer einfachen Mehrheit der anwesenden und</p>
---	--

մեծամասնությամբ, բացառությամբ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերի:

Ժողովն իրավազոր է, եթե նրան մասնակցում են բոլոր անդամների (ներկայացուցիչների) ընդհանուր թվի կեսից ավելին: Եթե ժողովը իրավասու չէ որոշումներ կայացնել, այն նորից պետք է հրավիրվի միևնույն օրակարգով մեկ շաբաթվա ընթացքում կամ նույն օրն և երբ՝ մեկ ժամ հետո: Այս դեպքում որոշումը կայացվում է առանց հաշվի առնելու անդամների և ներկայացուցիչների քանակը:

**ՎԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՈՒՐԸ**

ՎԱՐՉԱԿԱՆ

21. Վարչական խորհրդի կազմը և նրա իրավասությունները

Խորհուրդն իրականացնում է Կազմակերպության գործունեության ընդհանուր ղեկավարումը:

Ձայնի իրավունք ունեցող խորհրդի անդամները պետք է լինեն Կազմակերպության անդամ:

Կազմակերպության խորհուրդը կազմված է Կազմակերպության երեք ձայնի իրավունք ունեցող անդամներից խորհրդի առավելագույն քանակը սահմանվում է 5 (հինգ) անդամ խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Խորհրդի անդամները պետք է լավ տիրապետեն կազմակերպության գործնական լեզվին՝ գերմաներենին և քնակվեն Հայաստանում: Վարչական խորհուրդն իր անդամներից ընտրում է խորհրդի նախագահին

« Գերմանիայի դեսպանության ներկայացուցիչը խորհրդատվական հիմունքով միշտ մասնակցում է խորհրդի նիստերին:

stimmberechtigten Mitglieder gefasst, außerfalls anders in der Satzung festgelegt.

Die Mitgliederversammlung der Organisation ist beschlussfähig, wenn über die Hälfte aller Mitglieder (Vertreter) der Organisation teilnehmen. Ist eine Versammlung nicht beschlussfähig, muss sie wieder innerhalb von einer Woche oder am gleichen Tag, jedoch mit einer Wartezeit von einer Stunde mit der gleichen Tagesordnung stattfinden. Diese ist unabhängig von der Zahl der anwesenden und vertretenen stimmberechtigten Mitglieder beschlussfähig.

VORSTAND DER ORGANISATION

21. Vorstandsmitglieder und deren Zuständigkeiten

Der Vorstand verwaltet die allgemeine Geschäftsführung der Organisation.

Stimmberechtigte Vorstandsmitglieder müssen Mitglieder der Organisation sein.

Der stimmberechtigte Vorstand der Organisation besteht aus 3 (drei) Mitgliedern. Die maximale Zahl der Vorstandsmitglieder ist 5 (fünf). Jedes Vorstandsmitglied hat eine Stimme. Der Vorstandsvorsitzende wird aus der Mitte der Vorstandsmitglieder ausgewählt.

Die Vorstandsmitglieder sollten die Geschäftssprache der Organisation, Deutsch gut beherrschen und ihren Lebensmittelpunkt in Armenien haben.

Der Vertreter der Deutschen Botschaft in Eriwan nimmt stets an den Vorstandssitzungen beratend teil. Um die Kontinuität der Vorstandsarbeit zu gewährleisten, finden die Wahlen in angemessenen

<p>Խորհրդի շարունակական աշխատանքն ապահովելու համար վերջինիս ընտրությունը իրականացվում է որոշակի սահմանված ժամկետում այնպես, որ Խորհրդի աշխատանքը մշտապես ղեկավարվի գործող Խորհրդի անդամներից նավագագույնը մեկի կողմից:</p>	<p>Zeitabständen statt, so dass die Vorstandsarbeit immer von mindestens einem bestehenden Vorstandsmitglied weitergeführt wird.</p>
<p>Վարչական Խորհրդի պարտականություններին (իրավասությանն) են դասվում մասնավորապես՝</p>	<p>Dem Vorstand obliegen folgende Aufgaben (Zuständigkeiten):</p>
<p>Ա) ներկայացնել Կազմակերպությունը դրսում Խորհրդի նախագահի միջոցով, ով իրավունք ունի այս առաջադրանքը փոխանցել Խորհրդի մյուս անդամներին կամ գործադիր տնօրենին</p>	<p>A. Die Repräsentanz der Organisation nach außen durch den Vorsitzenden, der das Recht hat, diese Aufgabe an andere Vorstandsmitglieder oder den Geschäftsführer zu delegieren</p>
<p>Բ) գեկուցելն Ընդհանուր ժողովում,</p>	<p>B. Berichterstattung an die Mitgliederversammlung</p>
<p>Գ) Կազմակերպության քյուցեի հաստատումը</p>	<p>C. Bestätigung des Wirtschaftsplanes der Organisation</p>
<p>Դ) Ընդհանուր ժողովի նախապատրաստումը՝ ներառյալ՝ Ընդհանուր ժողովի որոշումների և օրակարգի, Ե) Կազմակերպության տնօրենի (բացառությամբ տնօրենի առաջին անգամ նշանակում, ինչն իրականացվում է Կազմակերպության հիմնադիր ժողովի կողմից), գլխավոր հաշվապահի և այլ հիմնական հաստիքային աշխատողների նշանակումն և ազատումը, այդ թվում նաև դուստր կազմակերպությունում,</p>	<p>D. Vorbereitung der ordentlichen Mitgliederversammlung, darunter auch Entscheidungs- und Tagesordnungsentwurf E. Ernennung (außer die Ernennung des Geschäftsführers zum ersten Mal, die von der Gründungsversammlung der Organisation durchgeführt wird) und Entlassung des Geschäftsführers, des Buchhalters und weiterer hauptamtlicher Mitarbeiter der Organisation, jeweils einschließlich in den Tochtergesellschaften</p>
<p>Զ) Կազմակերպության անունից 5000 (հինգ հազար) եվրոն գերազանցող արժեքով գործարքների կնքման համար համաձայնության տրամադրումը,</p>	<p>F. Genehmigung für rechtsgeschäftliche Handlungen über 5.000 (fünftausend) Euro im Namen der Organisation,</p>
<p>Է) Կազմակերպության ներքին կանոնակարգերի հաստատումը</p>	<p>G. Bestätigung der internen Regelungen der Organisation</p>
<p>Ը) Խորհրդատվական մարմնի նշանակում առավելագույնը 2 (երկու) տարի ժամկետով և վերջինիս ազատ արձակում՝ համաձայն</p>	<p>H. Einberufung von Beiräten für eine Dauer von maximal 2 (zwei) Jahren und deren Abberufung per Vorstandsbeschluss</p>

Վարչական խորհրդի որոշման:	
<p>22. Վարչական խորհրդի որոշումների կայացման կարգը</p> <p>խորհրդի նիստն իրավասու է, եթե նիստին ներկա են նվազագույնը երկու խորհրդի անդամ:</p> <p>Վարչական խորհրդում որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ խորհրդի որոշումը ստորագրում է Նախագահը: Նախագահի բացակայության դեպքում այն ստորագրում է իր տեղակալը:</p> <p>Վարչական խորհրդի նիստերը գումարվում են Վարչական խորհրդի նախագահի կողմից կամ վերջինիս գումարումը հանձնարարվում է Տնօրենին:</p>	<p>22. Entscheidungsverfahren des Vorstandes</p> <p>Beschlussfähigkeit ist bei Anwesenheit von mindestens zwei Vorstandsmitgliedern gegeben. Die Entscheidungen werden von den Vorstandsmitgliedern mit einfacher Mehrheit der Stimmen getroffen. Der Vorstandsbeschluss wird durch den Vorsitzenden unterschrieben. Im Falle seiner Abwesenheit wird der Beschluss von dem stellvertretenden Vorsitzenden unterschrieben. Vorstandssitzungen werden vom Vorsitzenden einberufen und können an den Geschäftsführer delegiert werden.</p>
<p>ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԸ</p>	<p>GESCHÄFTSFÜHRER DER ORGANISATION</p>
<p>23. Կազմակերպության տնօրենի իրավասությունները</p> <p>Կազմակերպության տնօրենը իրականացնում է Կազմակերպության գործունեության ընթացիկ կառավարումը՝ համաձայն Կազմակերպության նպատակներին և առաջադրանքներին:</p>	<p>23. Zuständigkeiten des Geschäftsführers der Organisation</p> <p>Der Geschäftsführer der Organisation leitet die laufenden Geschäfte der Organisation nach Zwecken und Aufgaben der Organisation.</p>
<p>Կազմակերպության Տնօրենը</p>	<p>Der Geschäftsführer der Organisation</p>
<p>Ա) տնօրինում և կառավարում է Ընկերության գույքը ցանկացած տեսակի և չափի, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից՝ հաշվի առնելով սույն կանոնադրությամբ գույքի տնօրինման սահմանափակումը</p> <p>Բ) ներկայացնում է Ընկերությունը</p>	<p>a) verwaltet das Vermögen sowie die finanziellen Mittel der Organisation in aller Art und Maße, schließt Geschäfte im Namen der Organisation laut der in der Satzung der Organisation festgelegte Beschränkung für die Vermögensverwaltung der Organisation ab</p> <p>b) vertritt die Organisation in der Republik Armenien und im Ausland</p>

<p>Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում,</p> <p>Գ) գործում է առանց լիազորագրի և աշխատանքային պայմանագրի հիման վրա,</p> <p>Դ) տալիս է լիազորագրեր,</p> <p>Ե) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,</p> <p>Ձ) բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժույթային) և այլ հաշիվներ,</p> <p>Է) ըստ քվանդակության նախապատրաստում է խորհրդի նիստը,</p> <p>Ը) խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը, տարեկան ծախսերի նախահաշիվը:</p> <p>Թ) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.</p> <p>ժ) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության ոչ հիմնական հաստիքային աշխատակիցներին.</p> <p>Ի) հաստատում է Կազմակերպության, ինչպես նաև նրա մարմինների հաշվետվությունները կանոնադրությամբ սահմանված հաճախականությամբ՝ տարեկան մեկ անգամ ներկայացնելով ժողովի հաստատմանը</p> <p>Լ) աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,</p> <p>Խ) առաջարկություններ է անում՝</p> <p>ի. ընթացիկ ծախսերը ծածկելու համար անդամավճարի չափի կամ դրույքաչափերի մասին, ինչպես նաև</p>	<p>c) handelt aufgrund des Arbeitsvertrags</p> <p>d) darf Bevollmächtigungen erteilen</p> <p>e) schließt gesetzmäßig Verträge ab, darunter Arbeitsverträge</p> <p>f) darf bei den Banken ein Girokonto (darunter auch Fremdwährungskonten) sowie andere Konten eröffnen</p> <p>g) bereitet inhaltlich die Vorstandssitzungen vor</p> <p>h) vereinbart die interne Arbeitsregelung der Organisation, deren Abteilungsstruktur und Organigramm mit dem Vorstand, vorläufigen Haushaltsplan</p> <p>i) vergibt im Rahmen seiner Zuständigkeiten Anweisungen, Aufträge geben und diese kontrollieren</p> <p>j) darf gesetzmäßig nichthauptamtliche Mitarbeiter der Vereinigung anstellen und diese entlassen</p> <p>k) bestätigt die Berichte der Organisation und deren Organe gemäß der in der Satzung der Organisation festgelegte Häufigkeit und delegiert diese der Mitgliederversammlung der Organisation zur Bestätigung vor,</p> <p>l) trifft Maßnahmen zur Förderung und zur disziplinarischen Verantwortung der Mitarbeiter</p> <p>m) macht dem Vorstand Vorschläge über</p> <p>i. die Höhe der Mitgliedsbeiträge bzw. Gebührenordnung zur Deckung der laufenden Ausgaben sowie</p>
--	--

<p>ii. խորհրդի կողմից կարևոր պայմանագրերի (անշարժ գույքի պայմանագրեր, հիմնական հաստիքային աշխատակիցների աշխատանքային պայմանագրեր, ինչպես նաև պայմանագրի լուծարում կամ աշխատակիցների ազատում) կնքման մասին:</p>	<p>ii. den Abschluss von maßgeblichen Verträgen durch den Vorstand (Immobilienmietverträge, Arbeitsverträge über hauptamtliche Mitarbeiter sowie die Kündigung von Verträgen bzw. die Entlassung von hauptamtlichen Mitarbeitern).</p>
<p>Խ) իրականացնում է այլ լիազորություններ</p> <p>Տնօրենի հետ աշխատանքային պայմանագիրը կնքում է Վարչական խորհրդի նախագահը</p>	<p>n) verfügt über weitere Zuständigkeiten</p> <p>Der Arbeitsvertrag wird zwischen dem Geschäftsführer und dem Vorstandsvorsitzenden der Vereinigung abgeschlossen.</p>
<p>ԳՈՒՅՔԸ ՏՆՕՐԻՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԱՅՂ ԹՎՈՒՄ ՆԱԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԼՈՒՇԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ</p>	<p>VERMÖGENSVERWALTUNG, UNTER ANDEREM BEI DER LIQUIDATION DER ORGANISATION</p>
<p>Կազմակերպության եկամուտը չի կարող բաշխվել անդամների միջև:</p> <p>Կազմակերպության լուծարման դեպքում նրա գույքն ուղղվում է սույն Կանոնադրությամբ նախատեսված նպատակների և առաջադրանքների իրականացմանը, իսկ դրա անհնարինության դեպքում փոխանցվում է պետական քյուջե:</p> <p>Կազմակերպության լուծարումն ու վերակազմակերպումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:</p>	<p>Das Einkommen der Organisation kann zwischen den Mitgliedern nicht verteilt werden.</p> <p>Bei der Auflösung der Organisation wird das Vermögen zur Durchführung der in der vorliegenden Satzung ernannten Ziele und Aufgaben genutzt. Die Auflösung und die Reorganisation der Organisation werden gemäß der armenischen Gesetzgebung der Republik Armenien durchgeführt.</p>
<p>ՎԵՐՍՏՈՒԳԻՉԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</p> <p>Վերստուգիչն իրավասու է՝</p> <p>1) տարին մեկ անցկացնելու Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության ստուգում.</p> <p>2) ծանոթանալու Կազմակերպության գործունեությանն առնչվող բոլոր փաստաթղթերին և Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով պարտադիր քննարկման ենթակա</p>	<p>DIE ZUSTÄNDIGKEITEN DER/DES KASSENPRÜFERS(IN)</p> <p>Der/Die Kassenprüfer/in hat folgende Zuständigkeiten:</p> <ol style="list-style-type: none"> 1) Einmal im Jahr finanzielle und kommerzielle Aktivitäten der Organisation zu prüfen, 2) sich mit allen Dokumenten im Zusammenhang mit den Aktivitäten der Organisation und ihrer Organe vertraut zu machen, um Vorschläge den Organen der Organisation unter Vorbehalt einer

<p>առաջարկություններ ներկայացնելու նրա մարմիններին.</p> <p>3) պահանջելու և ստանալու Կազմակերպության գործունեության վերաբերյալ տեղեկություններ.</p> <p>4) իրականացնելու Կազմակերպության կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ նախատեսված այլ լիազորություններ:</p>	<p>obligatorischen Prüfung in der von der Satzung der Organisation vorgeschriebenen Weise vorzulegen,</p> <p>3) Informationen von der Organisation zu verlangen und zu bekommen,</p> <p>4) andere Befugnisse auszuüben, die in der Satzung der Organisation oder durch den Beschluss der Versammlung vorgesehen sind.</p>
<p>ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ</p> <p>Կանոնադրությունը կազմված է հայերեն և գերմաներեն լեզուներով: Հայերեն և գերմաներեն տեքստերի միջև տարբերության դեպքում նախապատվությունը տրվում է հայերեն տեքստին:</p>	<p>SCHLUSSBESTIMMUNGEN</p> <p>Die Satzung wird auf Armenisch und auf Deutsch verfasst. Im Falle von Unstimmigkeiten zwischen beiden Texten hat der armenische Text Vorrang.</p>